

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երաշխավորության մասին

«_____» _____ 200 թ.

_____ գուղացիական փոխօգնության միությունը, ի դեմս նախագահ _____ ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Միություն», մի կողմից, և Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը այսուհետև՝ «Ներդրող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Միությունը պարտավորվում է Ներդրողի առջև պատասխանատվություն կրել՝ Ներդրողի կողմից իր ներկայացուցչի միջոցով _____ պայմանագրի(երի) համաձայն Միության «Երկիր» ծրագրի շրջանակներում Միության անդամների հետ կնքված պայմանագրերով մասնակիցների պարտավորությունների կատարման համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Միությունը պարտավորվում է Ներդրողի առջև պատասխանատվություն կրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված պարտականությունների կատարման համար սույն ծավալով, ինչ ««Երկիր» հիմնադրամ» ծրագրի մասնակիցները:
- 2.2 Միությունը պարտավոր է սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրերով սահմանված ժամկետի սկսվելու պահից Ներդրողին երեսուն օրվա ընթացքում վճարել Մասնակիցների կողմից չվճարած գումարը:
- 2.3 Ներդրողը լիազորում է Միությանը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրերի կատարման հսկողություն իրականացնելու համար:
- 2.4 Ներդրողը լիազորում է Միությանը՝ իրականացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրերի համաձայն կատարված ներդրումների շահույթի տարեկան հաշվարկ՝ ըստ Միության կողմից ընդունված գնահատման չափանիշների:
- 2.5 Միությունը պարտավոր է ապահովել Ներդրողին և նրա ներկայացուցչին անհրաժեշտ միջոցներով՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրերի կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:
- 2.6 Ներդրողը պարտավոր է 2.4 կետում սահմանված կարգով որոշվող տարեկան շահույթի տոկոսը հանձնել Միությանը:
- 2.7 Եթե Միությունը սույն պայմանագրի 2.2 կետի համաձայն չկատարի իր պարտավորությունը, ապա Միությունը Ներդրողին վճարում է տուգանք՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.1%-ի չափով:
- 2.8 Ներդրողը պարտավոր է Միությանը հանձնել Մասնակցի դեմ ունեցած իր պահանջները հաստատող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները՝ սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները Երաշխավորի կողմից կատարելու պահից մեկ օրվա ընթացքում:
- 2.9 Մասնակցի պարտավորությունները Միության կողմից կատարելուց հետո, Միությանն են անցնում Ներդրողի իրավունքները Մասնակցի նկատմամբ այն ծավալով, որով Միությունը բավարարել է

Ներդրողի պահանջը: Միությունը իրավունք ունի նաև Մասնակցից պահանջել՝ հատուցելու Մասնակցի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ իր կրած վնասները:

3. ԺԱՍԿԵՏՆԵՐԸ

3.1 Երաշխավորությունը դադարում է, եթե Ներդրողը պայմանագրի 1.1 կետում նշված պարտավորությունների կատարման ժամկետը սկսվելու օրվանից երեք ամսվա ընթացքում Միությանը չի ներկայացնում վճարման պահանջ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

_____ Գ ՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ	ՆԵՐԴՐՈՂ՝
ՓՈՒՆՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ	_____
ՆԱԽԱԳԱՅ՝ _____	_____
_____	_____
_____	_____